Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2023 թվականի ապրիլի 26-ից 27-ը

Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Ռուստամ Բադասյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ապրիլի 26-ից 27-ը

3. **Հրավիրող կողմը՝**

Ռուսաստանի դաշնային հարկային ծառայություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Միջոցառմանը մասնակցության հիմնական նպատակներից էր քննարկելու ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության կողմից իրականացված միջսահմանային առևտրի շրջանակներում կիրառվող էլեկտրոնային ուղեկցող փաստաթղթերի փոխանակման փորձնական ծրագրի արդյունքները:

Գործուղման նպատակն էր նաև մասնակցելու անդրսահմանային առևտրի թվայնացմանը, վերջինիս հեռանկարներին և խոչընդոտներին վերաբերող թեմաների այլ քննարկմանը, տարբեր երկրների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության թվայնացման հեռանկարների, ինչպես նաև կադրային պոտենցիալի զարգացման հարցերի քննարկմանը:

5. **Քննարկված թեմաները՝**

Համաժողովի ընթացքում քննարկվեցին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության կողմից իրականացված միջսահմանային առևտրի շրջանակներում կիրառվող էլեկտրոնային ուղեկցող

փաստաթղթերի փոխանակման փորձնական ծրագրի առաջին փուլի արդյունքները, որոնց ընթացքում նախանշվեցին առաջացած խնդիրները, դրական կողմերը և հետագա անելիքները:

Միաժամանակ, համաժողովի ընթացքում Եվրասիական տնտեսական միության առանձին երկրների, ԱՊՀ անդամ առանձին պետությունների, «ԲՐԻԿՍ» խմբի մասնակից առանձին երկրների հարկային մարմինների ղեկավարների, ինչպես նաև համաժողովին մասնակից ՌԴ խոշոր բիզնեսի հիմնադիրներին (Wildberries, VK) ներկայացվեցին զեկույցներ, որոնք հիմնականում վերաբերում էին անդրսահմանային առևտրի խնդիրներին, կադրերի կառավարման և կադրային ներուժի զարգացման մոտեցումներին (այդ թվում՝ հարկային ծառայություններում):

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովի առաջին օրը, որը տեղի ունեցավ Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության ղեկավարի մասնակցությամբ, հանդես եկա ելույթով, որը վերաբերում էր միջսահմանային առևտրի շրջանակներում կիրառվող էլեկտրոնային ուղեկցող փաստաթղթերի փոխանակման փորձնական ծրագրի առաջին փուլի արդյունքներին, ինչպես նաև ՀՀ-ում կիրառվող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանը:

Համաժողովի ընթացքում աշխատանքային քննարկումներ են տեղի ունեցել համաժողովին մասնակցող երկրների հարկային մարմինների ներկայացուցիչների հետ, որոնց ժամանակ բարձրացվել և կարևորվել է անդրսահմանային էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության զարգացման և ներդրման ուղղությամբ կողմերի աշխատանքների շարունակականությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության ղեկավարի հետ վերահաստատվել է այն, որ միջսահմանային առևտրի շրջանակներում կիրառվող էլեկտրոնային ուղեկցող փաստաթղթերի փոխանակման ծրագիրը «կյանքի կոչելու» համար անհրաժեշտ է շարունակել աշխատանքները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Համաժողովին մասնակցող երկրների հարկային մարմինների ներկայացուցիչների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ աշխատանքային կարգով համագործակցության (այդ թվում՝ պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով հաղորդակցվելու) վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

5/3/2023

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

03. 05. 2023թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 19-ի
N1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **435-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Ռուսաստանի Դաշնություն՝ քաղաք Մոսկվա**
5. Գործուղման ժամկետները՝ **26.04.2023-27.04.2023թթ.**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Ռուսական Բաղասյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	186,565.00	**186.57**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 134.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51,809.76	
	Օրերի քանակը	1	
	Ընդամենը (դրամ)	51,809.00	**51.81**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 86.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	33,251.04	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	66,502.00	**66.50**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		-
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**304.88**	**304.88**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ 03.05.2023թ.